ՎԵՑՕՐԵԱՅՔ

ՊԻՍԻԴԵԱՑ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

(Տես զսկիզբն յէջ 109)

107 Քանզի 'ի վեր ամբառնայ (երկինք և խորանայ[1] 'ի վայր,
եւ պարզի ըստ ձորութեան 'ի լայնութիւնն[2].
Հաւասար շուրջանակի զմեկուսութիւնն ունի.
110 Կայուք փախչի[3], և շարժիւք կայ մնայ.
Կայս զշարժութիւնն ունի անճառաբար[4],
Ընթանայ հանդերձ ամենայնիւ[5] զշկաառակն,
Որպէս զի մի զոյգ շարժութիւն վարուցն[6]
Մղումն ինչ կրելով 'ի վայր կործանեսցի 'ի կարգէն։
115 Քանզի հակառակն ընթացիցն վայելչաբար
Երագութեամբ, և շուրջ ընդդիմացեալ
Ունի զպնդութիւն վարուցն. զի մի գուցէ
Ի վայր եկեսցէ բերմանն ուժգնութիւն
Թափմամբ սուր[7] ընթացիցն.
120 Ա.յլ որպէս շաղկապ ինչ ընդդէմ պնդեալ
Հակառակ հոլովիւքն՝ շարակալեալ լինի վաղվաղմամբն,
Հիմամբ ընթացիւք, և բերման կառուցմամբ[8]։
Է ամենայն ծայրագունից ծայրագոյն.
Ցահման է ամենայն սահմանաց,
125 Մեկուսի է ամենայն մեկուսեաց.
Ոչինչ է սորա չափ՝ բայց անչափութիւն։
Յայտմանէ հրաշացեալք ընդ սահիւքն[9]
Որպէս ընդ արձակ, ընդ անբովանդակելի և ընդ ամբարձեալ,

1. Ցօրինակի մերում կորանայ։
2. Ա.յս է, պարզեալ ձգի ընդ լայնութիւն, ըստ օրինակի ձորոյ։
3. Ցօրինակի մերում՝ շարժէ։— Իմա 'ի կալ դադարէն՝ շարժի, և 'ի շարժելն՝ կայ մնայ։
4. Իմա ըստ յունին և զկալն և զշարժումն ունի աքանչելապէս։
5. Զայդ բառն σύμπας յեղեալ է թարգմանչին մակբայաբար 'ի հայումս, փոխանակ գոյականի. այլ իմաստքն են. Ընթանայ զշկաառակն համայն եղելոցս։
6. Ա.յս է, ընթացիցն, հոլովմանցն (ἔλασις). գուցէ 'ի վրէ՛, վրա՛ն բառից։
7. Թուի լինել գաղ, ըստ յունին κενός.
8. Ա.յս է, հիմանն ընթանալով, և բերմանն (φορᾷ) հաստատուն կալով։
9. Ա.յսպէս յօրինակին. գուցէ ընթեռնլի ընդ սա հիմն. այլ յունն ունի. որպէս ընդ մեծ ինչ (ὡς μέγαν).

digitised by A.R.A.R.@

Առասպելս իմն ստեղծին բան՝դագուչեալ աշխատութեամբ՝[1]
130 Երկայնս ինչ 'ի ներքուստ հաստատեալ պիւնս.
Թերևս երկայն խորութիւն անյայտութեանն՝
Սիւնս ինչ անյայտս տպաւորեալ ստեղծուածոց։
Քանզի մեծ է՝ որպէս Աստուծոյ փոքր աթոռ.
Կամ՝ գնացս յարուցեալ[2], որոյ յոգնումն ոչ գոյ,
135 Մինչև գալարեսցէ՝ որ կառոյցն զնա՝ բան։
Զգենու զպատմուճանն մեծ՝
Զոդ, կըկեալ կըկոցաւ պանչելեաւ,
Հեղեալ ճաճանչեղ և նուրբ հոսմամբ,
Պահեալ մտեալ յամենայն մարմնեղէնս։
140 Ցառալ գոյ փեսայաբար պսակեալ,
Առեալ մարգարիտ պայծառ՝ զատեղս,
Ունի և 'ի լանջն կարկեհան մի,
Որպէս հուր փայլակեալ առ տիւ.
Իսկ այլ սպիտակ հրատեսակ՝ առ ոտն կոյս,
145 Ցուցանելով սպիտակ ամենայն ուրեք զգիշերն.
Արգելեալ ունի զամենայն՝ որպէս 'ի բանտի,
Պահէ պարապեալ զտարերս ամենայն.
Ոչոց լինի ամենայն շարժնոցս.
Հասանէ ամենայն շարժմանց, ընդ նմին շարժելով զամենայն։
150 Ի միջի բերէ[3] զերկիր՝ իբրև զկէտ մի,
151 Ի վերայ ոչինչ[4] կառուցման կառուցեալ։
153 Պատէ զանդունդս՝ որպէս 'ի խանձարուրս.
Շաղի զամենայնիս՝ որպէս զուռկանաւ.
155 Պնդէ զամենայն, ընդ ինքեան ունելով միայն[5].
Որ[6] զայսքան աշխարհս արգելեալ 'ի ներքս,
Այոտաքուստ կուսէ ինքն լինի պնդեալ լայնութեամբ.
Քանզի չափ[7] երկնի՝ անչափութեամբ,
Եւ առ քև՝ կէտ մի[8] է անձուկ։
160 Ո՛ հնարագործդ բազմաշուրջ յարկիդ,

1. Ցոյն բնագիրն. Առասպելս իմն ստեղծին, որպէս թէ Ալեքսանդեայ աշխատութեամբ, և այլն։
2. Ցոյնն ասէ. Ἡδὰ δὲ, γηρῶν այս է՝ աբիուն+ ծերութիւն, փոխանակ բառիցդ կամ գնացս յարուցեալ։
3. Ցօրինակի մերում՝ 'ի դնէ բերելով գերէր որդ։ գնէ։
4. Ցօրինակի մերում՝ ոչնչէ։
5. Σοὶ μόνῳ κρατούμενα.
6. Օրինակ մեր. Եւ զայսոսն։
7. Օրինակ մեր՝ համաձայն յունին՝ չէ չափ երկնի։
8. Ցօրինակի մերում՝ Եւ առ։ տեղ կէտ է մի անձուկ։

digitised by A.R.A.R.@

Զի աքանչելի վայելչութեամբ գծագրեալ զձեղունն,
Քո արուեստիւդ՝ յարկես զստորինսա,
Եւ զպանդուխտս ընդ երկնի յարկաւ.
Զեռուցանելով և խարուկելով զոգս,
165 Սակայն ոչ կիզուլ ջերմութեամբն զարարածս.
Այլ որպէս թուեցաւ քեզ՝ պատշաճել զամենայն բնութիւն։
Եւ զանյայտ էութիւն հրեշտակաց,
Կամ հոգիացուցեալ[1] կամ սրագոյն բոց.
Ջերմութիւն նոցա և զարութիւն տրամադրեալ[2].
170 Կամ չորեքկերպեան ձևով կենդանի պատկեր,
Ջկարծրութիւն նոցա կենդանագրելով և զղանազանութիւն.
Կամ՝ զբազմութիւն աչաց նոցա բացելոց,
Որպէս զի զլոյսդ[3] յայտնագոյնս տեսցեն,
Եւ մի զանխլանալ[4] 'ի ստորինս շարժելոցս։
175 Քանզի[5] քեզ մատուցանեն զերգս՝ որպէս յաղթողի,
Քերովբէք և պետութիւնք և զինուորութիւնք աթոռոց.
Եւ ամենայն սերովբէք անշարժ երագութեամբ[6]
Կայիւք թռչին՝ և կառուցմամբ ընթանան.
Եւ երկոքին թևօք՝ զերեսսայն
180 Ծածկեն տեսութիւն. իսկ երկուքն զոտս,
Եւ երկուքն 'ի բարձունս թռչին մեծս։
Եւ զերեքլուսեան սրբութեանն երգս
Միոյ տէրութեանդ պատշաճեն պաշտօն[7],
Ցուցանելով բարուք ժողովումն՝ որոշմամբ,
185 Եւ ժողովմամբ տեսանելոյ[8] բանին,
Անչատաբար զառանձնաւորութիւնսն պաշտել,
Եւ միաւորութեանն[9] երկրպագութեան՝
Ցայտնաբանական յստակել[10] զուղղափառութիւն,

1. Օրինակ մեր՝ համաձայն ընդ յոյն բնագրին՝ դնէ հոգի ցոյցել։
2. Ցոյնն՝ նկարագրեալ, նշանաք ցուցեալ (διαγράφω).
3. Օրինակ մեր ունի գ- լոյսդ։
4. Օրինակ մեր՝ չդանիլանալ 'ի սրբէն։
5. Ցօրինակի մերում չիք քանզի։
6. Օրինակ մեր՝ անշարժ-ինամբ. յօրինակի Անտոնեան Հարց գրեալ կայր արշարժ երթ-ինամբ, զուցէ վրիպանաք ընդօրինակողին. յոյնն ունի՝ ըստ որում մեքս եդաք անշարժ երթ-ինամբ (εἰς ἀκίνητον τάλος).
7. Ցօրինակի մերում՝ 'ի պաշտօն պաշտանին։
8. Ցօրինակի մերում՝ տեսեալոյ. այլ թուի թարգմանչին կամ առ սխալագիր բնագրին և կամ թիւր ընթերցմամբ չփոթեալ զθεορύτου (յաստուածուստ հեղոյ կամ հոսեցելոյ) ընդ διορᾶω (տեսանեմ) բայի։
9. Օրինակ մեր՝ ըստ յունին դնէ. Եւ միաւորապէս երկրպագութեանն։
10. Ցօրինակին յստակել. եդաք զուղիղն ըստ մերումս օրինակի և ըստ յունին։

digitised by A.R.A.R.@

Զորքութիւն[1] բանին մարմնացեալ,
190 Ոչ սահիլ 'ի յայլացեղ չորրորդութիւնն։
Այլ մի դէմ, և աստուածպետութիւն մի.
Եւ նախ քան զմարմինն՝ օրհնել[2], և մարմնով[3]
Զբանն զնոյն՝ մարդ և աստուած բնութեամբ։
Ոչ յաւելուածով չփոթեալ և ոչ անջատմամբ.
195 Պակայն չարչարեալ[4], այլ ոչ փոփոխեալ չփոթմամբ,
Երկին զմեկին[5], առանց խառնակութեան։
Ո՛ որ առ գեղեցկութիւն 'ի բարձունս ատացուածոցն[6],
Բուրաստան ունկեալ աստեղաց բազմաց,
Զգիշեր զարդարեցուցեալ և զգեցուցեալ զտիւ,
200 Զլոյս մաքրեալ և թխայուցեալ[7] զերեկ.
Հուր մշակեալ և սերմանեալ ջուր,
Զհասարակաց պիտոյիցն դանձարան։

Շարունակելի։

1. Զոյնն՝ զորդիութիւն (διότητα).
2. Զօրինակին օրհնիլ։
3. Օրինակ մեր դնէ. Եւ նախ քան զմարմինն, և յետ մարմնով, և այլն։
4. Զիք 'ի յոյնն սակայն չարչարեալ, այլ ասէ. Եւ ոչ անջատաբար կրելով դէպն (աստուածութեանն անձին)։
5. Իմա՝ (օրհնել) զերկուս (զերկուս բնութիւնս) և զմեկն (զմի անձն). կամ մակբայօրէն՝ մեկն (օրհնել) զերկուս (բնութիւնս)։
6. Իմա՝ ատաբածոց, ըստ յունին։
7. Զօրինակի մերում. Զլոյս մաքրեալ և մթացուցեալ զերեկ։



digitised by A.R.A.R.@